ներ: Այդ հոգին թանկագին էր, և այդ հոգին թանկագին լինելով՝ մենք նրա արժեքը պիտի երբեք չմոռանանք, և նորից ամեն անգամ, որ հիշենք, ասենք. «Աստված, ընդունիր նրա հոգին, դասիր նրան մեր սուրբ Հայրապետների դասը. որպեսզի այնտեղից մեզ օրհնի բոլոր մեր Եկեղեցվո սրբերի և հայրապետների հետ, և մենք այստեղ ողջ մնացողներս միշտ ասենք. Փառք Քեզ, Աստված, Քո անունը օրհնյալ լինի հավիտյանս հավիտենից: Ամեն»:

Ուրեմն, Ս. Պատարագը, որ մեր Եկեղեցվո մեջ ամեն կիրակի կմատուցվի, Հիսուսի զոհաբերության խորհուրդն է, որով ամեն հավատացյալ պահ մը կվերանա ու հոգիով կվերապրի անոր տառապանքը և անոր անսահման սերը հանդեպ մարդոց, որոնց համար զոհվեցավ: Ասկե պետք չէ հետևցնենք, սակայն, թե քանի որ Հիսուս մեր մեղքերուն համար զոհվեցավ, այլևս, ուրեմն, մենք մեղք չունինք ու առանց խղճի խայթի կրնանք ապրիլ: Այսպիսի ըմբռնում մը, անշուշտ, շատ միամիտ պիտի ըլլար և բոլորովին կեղծ:

Հիսուս իր զոհաբերությամբ՝ մեղքը վերցնելու, չարը խափանելու գաղափարին գերագույն ապացույցը տվավ, մեծագույն տուրքը վճարեց, որպես աշխարհասասան օրինակ մարդկության համար:

Հիսուսի զոհաբերությունը ամեն քրիստոնյայի համար հոգեկան անխորտակելի ուժ մըն է՝ թե՛ չարը հաղթահարված է, թե՛ մեղքեն ազատվելու ճանապարհը բացված է: Այդ ճանապարհը Հիսուսի Ավետարանն է, անոր թողած կտակը, որուն եթե հավատանք ու հետևինք, կգիտնանք արբվիլ մեր մեղքերեն այն միջոցներով, որոնց մասին արդեն խոսեցանք:

Ահա՛, ուրեմն, Ս. Պատարգի հիմնական իմաստը և անոր խոշոր նշանակությունը քրիստոնյայի մը հոգևոր ապրումներուն մեջ»:

ՔԱՌԱՍՆՕՐՅԱ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

«Երանելիք են որք բնակեալ են ի տան Տեառն»:

Քառասուն օրեր առաջ ամբողջ հայ ժողովուրդը արցունքը աչքերին, բայց Տերունական հավատի խոստման կնիքը հոգում, դեպի հավիտենական հանգստի օթևանը ճանապարհեց իր սիրեցյալ Հովվապետին՝ Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին:

Հոկտեմբերի 2-ին, հավարտ սուրբ պատարագի, հանդիսադրությամբ Կաթողիկոսական Տեղապահ և Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի և աղոթական ներկայությամբ սրբազան հայրերի ու Մայր Աթոռիս միաբանության, տեղի ունեցավ Վեհափառ Հայրապետի մահվան քառասնօրյա կարգը, որի ընթացքին ամբողջ հավատացյալ ժողովուրդը և հոգևոր դասը մեր հայրերի սրբագործված աղոթքներով և մաղթանքներով խնդրեցին Տիրոջը՝ ասելով. «Դո՛ւ Տէր եւ այժմ ընկալ զխնդրուածս մեր եւ հանգո զհոգի սորա առ ամենայն արբոց եւ սիրելեաց անուան քոյ: Եւ զգերեզման ծառայիս քո կնքեալ պահեսցես, զի միշտ պահեսցին նշխարք ոսկերաց սորա մինչեւ յօր վերջնում կրկին գա-

ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ



Եկեղեցական տաղանդաշնորհությունների հետ. ինքնուրույն՝ ընդունվում Տեղափոխի, Ներքևում՝ Ս. Գրիգոր տրենդիսիսյան Մաշտոցյան և Գրիգոր հայոց Պատվիրյ
Ս. Գրիգոր տրենդիսիսյան Մաշտոցյան և Գրիգոր հայոց Պատվիրյ
Ներքևում՝ Ս. Գրիգոր տրենդիսիսյան Գաղութցյան

ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆՃՅԱՆԸ ՔԱՐՈԶԻ ՊԱՀԻՆ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ն օրհնում է
Կիլիկիո Կաթողիկոսությունից բերված հողը

լլուստեան քոյ: Եւ հոգւոյ սորա առաջնորդեա՛ յերկիր ուղիղ բարեխօսութեամբ ապրբոց քոց»:

Հընթացս սուրբ պատարագի հոգեշունչ քարոզ խոսեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյանը.

«Թագաւոր Երկնաւոր զԵկեղեցի քո անշարժ
պահեայ ի խաղաղութեան»:

Ամեն ս. պատարագի կրկնվող այս մաղթերգը հավիտենական, ճշմարիտ աղոթքն է եղած հայուն, և երկնավոր մեր թագավորը միշտ ալ լսած է մեզ:

Այս աղոթքը այսօր, երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին քառասնօրյա այս տխուր պահին, շատ ավելի էական կդառնա մեզ համար:

Քառասուն օրեր առաջ մեծ սուգի մատնվեցավ Հայ Պետականությունը, Հայ Եկեղեցին, ամբողջ հայությունը ի Հայաստան և ի Սփյուռք, որովհետև Վազգեն Կաթողիկոսի մահով ոսկեայուն մը իր փառքեն ընկավ:

Այս պահուն փորձը չեմ ուզեր ընել անոր կյանքը պատմելու: Մեծ մարդոց կյանքը իրենց մահեն առաջ հորինած է արդեն պատմության գեղեցիկ էջերեն մին:

Հիսուն տարիներու իր հոգևորականի կյանքով և երեսուն ինը տարիներ իբր Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ազգին ու Եկեղեցիին զգացումը, հավատքի մը պես ճառագայթեց իր մեջ և անով մտածեց ու գործեց:

Դժվարին օրերուն, երբ Ազգը զինքը ընտրեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, հայու հուզումով տեսավ մեր ժողովուրդին տառապանքը ու հայրական գուրգուրանքով մոտեցավ անոնց արտի, հոգիի ու մտքի ցավերուն: Դժվարին օրեր էին, ձեր բոլորին ծանոթ քաղաքական պայմաններու պատճառով: Սակայն Վազգեն Ա Կաթողիկոս, իբրև հայ և Հայրենասեր, նմանությունը ունեցավ Հովհան Օձնեցիի, Հակոբ Զուղայեցիի, Ներսես Աշտարակեցիի, Խրիմյան Հայրիկի և կանգուն մնաց, սեղի չտալով իր հայի կորովը և մնաց պատնեշի վրա հանուն իր ժողովրդյան և Հայ Եկեղեցվո:

Վազգեն Կաթողիկոսի շրթներուն վրա Աստուծո խոսքը իր վսեմ լրջությամբ արտահայտվեցավ, ըլլալով հոգերգությունը Աստծո սիրուն և իր ցավերուն և փառքերուն:

Նախքան հոգևորականի իր կյանքը և նաև անկե վերջ, կրթության ճամփով ազգի ապագային հավատացողներեն մին եղավ: Հաջողեցավ ժողովուրդը վարակել անցյալի ոգիով, գինել զանոնք կրթությամբ և պատրաստել գալիք օրերու ի հաշիվ: Այս բոլորին վկան իր ուսուցչական կյանքը, պատգամները և հազարավոր Հայրապետական իր Կոնդակները, որոնք անձնապես գրված, նաև կպատկերեն գեղեցիկ գրական կառույց մը:

Երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի կարևորագույն գործերեն մին եղավ Սփյուռքի և Հայրենիքի միջև ոսկի կամուրջ մը հաստատել: Իր բոլոր արտասահման այցելությունները, Հայրենիքի և Սփյուռքի միջև եղող հսկա սառույցը կարողացավ փշրել, նման Մովսեսի, կորստի ճամփում եղող Սփյուռքը դեպի Հայրենիք առաջնորդեց:

Այդ օրերուն Սփյուռքը ևս Հայրենի աշխարհին քաղաքական տխուր իրադարձությանց սոսկումով կնայեր: Շատ լավ գիտեր 1930-ական թվա-

կաններում կատարված աղետներն ու ապականությունները և մանավանդ Խորեն Կաթողիկոս Մուրադբեկյանի պարագան: Օտարության ճամփուն վրա, մեր ժողովուրդը սիրո և մխիթարության կարիքը ուներ, և այդ կարիքը շատ լավ գիտցավ Վազգեն Ա Կաթողիկոս: Սփյուռքը առանց Հայրենիքի չէր կրնար ապրիլ և Հայրենիքը չէր կրնար անտարբեր մնալ Սփյուռքի իր զավակներու նկատմամբ:

Այս բոլորը թերևս պարզ կթվի ձեզ, սակայն այս իրականացնելու համար չէր բավեր կորովը և գիտակցությունը, այլ անհրաժեշտ էր ճիշտ կերպով պլանավորել, համոզման անկեղծ վերաբերմունք ունենալ, ցույց տալ ճշմարիտ հայրենասերի հոգի: Վազգեն Ա Կաթողիկոս այս բոլոր առավելությանց և առաքինությանց անձ եղավ՝ առանց կեղծիքի և ձևականության:

Հայրենի Պետությունը շատ լավ գիտնալով Վեհափառ Հայրապետի հայրենասեր նվիրումն և բառայությունը, 1994 թ. հուլիսի 28-ին, Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով, հայ ժողովրդի արժեքներու պաշտպանության ու զարգացման գործի մեջ դրսևորած անձնուրաց նվիրումի և մատուցած բացառիկ ծառայություններու համար, Վեհափառին շնորհվեց «Հայաստանի Ազգային Հերոսի» բարձրագույն կոչում:

Չեմ ուզեր պատմության դատաստանը կանխել, սակայն ճշմարտությունից ավելի բան մը չէ, թե մեր պատմության փառքը կազմող բոլոր մեծ դեմքերը, ներառյալ Վազգեն Ա Կաթողիկոսը, եղած են որքան կրոնական, սակայն նույնքան ազգային: Այս իրավիճակը, հոգեկան հավատքը սկիզբ առավ Վարդանանց պատերազմով և Քաջն Վարդանի խոսքովը «Վասն Քրիստոսի, վասն Հայրենեաց, յառաջ»: Ղևոնդներով, Վարդաններով և Վահաններով կրոնական և ազգային միավորությունը շարունակվեցավ և պիտի շարունակվի առհավետ, մինչև վերջին հայու գոյությունը:

Եթե 301 թվականը Քրիստոնեության պետականացումն է, 451 թվականը՝ Վարդանանց պատերազմով Քրիստոնեության ազգայնացումն է:

Հայ Եկեղեցին, կրոնական հաստատություն մը ըլլալով հանդերձ, իր մեջ միշտ տիրական եղած է ազգայինը: Կրոնքը նույնացած է մեր ազգային կյանքին հետ և դարձած մեկ: Բոլոր քրիստոնյա ժողովուրդներու համար կարելի է ըսել, թե անոնք երկու ազգեր են, ցեղային և կրոնական զատորոշումներով: Հայ Եկեղեցին և իր ժողովուրդը սերտ առէջներով հյուսված են իրարու: Այս իրողության մեջ է Հայ Եկեղեցու թե՛ ուժը և թե՛ սկզբությունը:

Հայ Եկեղեցի կնշանակե հայ գիրը, հայ գրականությունը, ճարտարապետությունը, երաժշտությունը, ծեսը և, ի վերջո, ամբողջությունը մեր հոգեկան և մտավոր իրագործումներուն: Անոնք, որոնք գիտեն մեր պատմությունը, կրնան վկայել, թե հայ ժողովուրդի ինքնությունն ու ճշմարտությունն իր Եկեղեցիին մեջ բյուրեղացած կմնա: Երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոս, վերի բոլոր ճշմարտումներով, նախնիներու ուղին խոր հավատացող և իրագործողը եղավ:

«Թագաւոր Երկնաւոր զԵկեղեցի քո անշարժ պահեայ...»:

Ճշմարտություն մըն է, թե դարեր շարունակ Հայ Եկեղեցին այն վայրը եղավ, ուր հայը ինքզինք ամենեն ավելի հարազատ զգաց իր եղբայր հայուն հետ: Առանց Հայ Եկեղեցվո ջերմ զգայության մենք հազիվ թե հայ ենք:

Ամեն ժողովուրդ մեկ հայրենիք ունի: Սակայն հայը իր համար ստեղծած է երկրորդ հայրենիք մը, որ իր Եկեղեցին է: Դարեր շարունակ մեզի պարտադրված տխուր պայմաններու, հալածանքներու և գրավման պատ-

Ավարտվում է գերեզմանի կարգը

ՆՈՐ ՁԵՏԵՂՎԱԾ ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԻ ԿՆՔՈՒՄ

ճառներով աստանդական ապրած ենք, հեռու մեր հայրենի հողեն: Սակայն գիտցեր ենք Հայ Եկեղեցին մեր երկրորդ հայրենիքը ընել՝ հոն պահելով նաև մեր մշակույթի բոլոր գլխարկումները:

Անցյալին Հայ Եկեղեցին ծիրանի պատմությանի մեջ պարուրված թագուհիի մը գեղեցկությունը ուներ: Սակայն երբ սև ու դժբախտ օրեր պատահեցան, ծիրանիներու մեջ եղող թագուհին, այսինքն Հայ Եկեղեցին, գիտցավ իր ծիրանի պատմությանի ծվեններով իր զավակներուն վերքերը պատել:

«Թագաւոր Երկնաւոր զԵկեղեցի քո անշարժ պահեայ...»:

Մենք հավատացած ենք, որ Աստված կարող է քարերեն Աբրահամու որդիներ հարուցանել: Բայց պայման մը կա. մեր հույսը Աստծո ողորմության վրա դնելով չենք կրնար ձեռնածալ նստիլ: Պետք է «Պօղոս տնկէ, Ապօղոս ջուր տայ, որպէսզի Աստուած աճեցնէ»:

Ճիշտ Երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոս դադրեցավ ապրելե, դադրեցավ իր նյութական անձով, իր շունչով, իր խոսքով, իր գրչով, սակայն ան կապրի ու պիտի ապրի այն կյանքին մեջ, որ ինք ստեղծեց 39 տարիներու իր գահակալությամբ իբր Ամենայն Հայոց Կաթողիկոս: Ըսված է, թե ամեն մեռնող երկու փոսեր կբանա. մին՝ հողի կուրծքին, և մյուսն՝ մարդոց սրտին: Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մեկնումով հայ ժողովուրդի և Հայ Եկեղեցվո կուրծքին բացված փոսն բնավ պիտի չի գոցվի:

Մեր անցյալի երանելի մեծ Հայրապետներ իրենց սրտին փայփայեցին ազատ ու անկախ Հայրենիքի երազը: Այդ երազին իրականացումը Վազգեն Ա Կաթողիկոսի համար երանություն մը եղավ: Ինք առաջին տարիներուն անցավ տառապանքի ճամփեն, սակայն Աստված գերագույն այդ մխիթարությունը, իր վերջին օրերուն՝ իրեն պարգևեց:

Կսկիծ և արցունք իմ սրտին, կուխտենք քեզի, ով Վեհափառ, մենք, մտածումիդ և հոգիիդ զավակները, պիտի քալենք այն ճամփեն, որ դարեր շարունակ մեր երանելի Հայրապետները և դուն քալեցիք: Պիտի մարմնավորենք քու լուսավոր իդեալներդ մեր Եկեղեցիին և հայ ժողովուրդին համար:

Խաղաղություն հոգիիդ, պատվական ու անմոռանալի Վեհափառ:

Թող Երկնավոր Թագավորը խաղաղության մեջ պահե իր իսկ հիմնած Եկեղեցին:

Ամեն»:

Լույս և օրհնություն քո շիրմին, արդար Հայրապետ, և կարծես թե քո ունեցած արդարության մասին է պատգամում մեզ Աստված Եսայի մարգարեի բերանով. «Երանի առն, որ առնիցէ զայն եւ մարդոյ՝ որ կացցէ ի նմին եւ պահիցէ զձեռս իւր յառնելոյ զանիրաւութիւն» Ամեն: